

ԱԹՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ՝

Ա.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց Եկեղեցին կայ այսօր, զայդ գիտեմք մեք, գիտէ եւ աշխարհ ամենայն: Հայաստանեայց Եկեղեցին ալ գերազոյն աթոռ մը ունի, որ կը վարէ հոգեւոր գլխի բարձր պաշտօնը նոյն Եկեղեցւոյ փայ: Այդ աթոռը հայրապետական կամ կաթողիկոսական է: Եւ է ի վերայ ամենայն Հայոց, եւ չէ ընդ իշխանութեամբ այլոյ աթոռոյ: Ուրեմն Հայոց Եկեղեցին ազատ է եւ Հայաստանեայց աթոռը ինքնագլուխ է: Եթէ այսօրէն անցնինք այս դարուն սկիզբը, այս դարէն ալ ելնեմք անցեալ դար, եւ անցեալ դարէն ալ նախընթացը, նախընթաց դարէն ալ անկէջ յառաջագունին, եւ այսպէս դարէ դար բարձրանալով, նոյն դարերու պատմական եւ աւանդական յիշատակները քննեմք, անխափան եւ շարունակ կը տեսնեմք եւ կը գտնեմք որ Հայոց Եկեղեցի մը կայ միշտ ազատ, եւ Հայաստանեայց աթոռ մը կայ միշտ ինքնագլուխ: Աւելորդ է մեզ փաստերու եւ վկայութիւններու դիմել այնպիսի մի ճշմարտութիւն ապացուցանելու, որ ծանօթ իրողութիւն է եւ որ արեգակնային ճառագայթներու չափ լուսաւոր է:

Հայաստանեայց Եկեղեցւոյ այդ գերազոյն աթոռը նախամեծար Արարատեան աթոռն է այժմ, հաստատեալ եւ պայծառացեալ ի տեղին իջման Միաձինն ի լուսաւորչահիմն Սուրբ Էջմիածին: Պատմութիւնը կաւանդէ թէ Էջմիածնի Գահակալք ատեն մը նրստեր են եւս ի Արս եւ ի Հռոմկալ, պանդխտօրէն դեգերեր են ի Սեաւ լեռ, ի Մամնդաւ, յԱնի, յԱրգինա, եւ յԱղթամար, ժամանակ մ' ալ բնակեր են ի Դուին, այլ իրենց նախնական աթոռը եղեր է Ս. Էջմիածին Միաձինն իջմամբ հաստատեալ եւ հրամայեալ: Թէպէտ աթոռակալք՝ ժամանակին պահանջմանց պատկառ կալով տեղափոխուեր են, այլ չէ տեղափոխուեր աստուածահրաշ տեղին իջման, եւ չէ փոխուեր աթոռոյն իշխանութեանց եւ իրաւասութեանց եւ արտօնութեանց եւ պաշտամանց կերպն ու կարգը, եւ Հայաստանեայց աթոռը միշտ եւ յարաժամ անգստին ի սկզբանէ եւ յիւր ծագմանէ եղեր է ազատ եւ ինքնագլուխ, որ-

պէս եկեղեցական բացատրութեամբ կը կոչուին այն աթոռները որք իրենց վրայ ուրիշ մը գերազոյն և իշխող և հրամանահան չեն ճանչնար: Այդ բացատրութեան իմաստը ճշդելու համար համառօտիւ զննեմք եկեղեցական իշխանութեան կարգն ու կանոնը:

Եկեղեցական իշխանութիւնը սեփական անուամբ կը կոչուի ևս գոսակարգութիւն և նուիրապետութիւն, որովհետեւ զանազան դասէ աստիճանաւորաց կարգ մըն է, և նուիրական պետութիւն կամ իշխանութիւն մըն է, որ աստուածային և հոգեորական կանոնօք կը վարուի: Այդ իշխանութիւնը վարողներն պաշտօնեայք կը կոչուեն, ամենէն յետին աստիճանէ սկսեալ ամենէն բարձր աստիճանը, և իրենց վայելած իրաւունքը դարձեալ եկեղեցական բառով կը կոչուի իրաւասութիւն և արտօնութիւն, և միոյն միւսոյն վրայ ունեցած առաջնութիւնն ալ նախաթուութիւն կամ գերազոյն իշխանութիւն կը կոչուի: Առհասարակ պաշտօնեայք երկու աստիճանի կը բաժնուին, ստորին աստիճանէն քահանայք և իրենցմէ ստորնագոյն եզող պաշտօնեայք, վերին աստիճանէ են եպիսկոպոսուք և իրենցմէ վերնագոյն եզող պաշտօնեայք: Ստորին գոսակարգէն եզողները այժմ՝ ըստ մեզ եօթն աստիճանի կը բաժնուին, որք են գռնապանք, ընթերցողք, երգմանցուցիչք, ջահնկալք, կիսասարկաւազք, սարկաւազք և քահանայք: Այդ բաժանումը, զոր այժմ մեր եկեղեցին ունի, արեւմտեայց սովորութեան համաձայն է, իսկ արեւելեայց սովորութիւնը, որպիսի էր ի նախնումն և մերս Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութիւնը, չորս աստիճան միայն կը գնէ, որք են ընթերցողք, կիսասարկաւազք, սարկաւազք և քահանայք:

Եկեղեցական գոսակարգութեան ստորին մասին նկատմամբ աստէն չեմք խօսիր, վասն զի այդ մասը բովանդակապէս իւրաքանչիւր եկեղեցւոյ ներքին սահմանին մէջ կը պարփակուի և ուրիշ եկեղեցեաց հետ յարաբերութիւն չունի:

Բարձրաստիճան գոսակարգութիւնը եպիսկոպոսաց է, որք թէպէտ ձեռնադրութեամբ մի հոգեւոր աստիճան կազմեն, սակայն իրենց իրաւասութեան ընդարձակութեան նկատմամբ զանազան աստիճաններ կը ձևացնեն, և շատ մը տարբեր անուններով կը կոչուին, զոր օրինակ եպիսկոպոս, մետրապօլիտ, արքեպիսկոպոս, պրիմաս, եքսարքոս, հայրապետ, կաթողիկոս, պատրիարք, Սակայն այդ ամեն անունները դոյնչափ թուով աստիճաններ չեն

ցուցներս, զի զանազան եկեղեցեաց մէջ գործածուած տարբեր անուններ քիչ չատ զիրար կը շօշափեն և իրօք նոյն աստիճանը կը կազմեն:

Նախկին անունը ամէն եկեղեցեաց հասարակ է, և եկեղեցական իշխանաւորութեան ստորնագոյն աստիճանն է, և կը նշանակէ տեսուչ մը կամ հովիւ մը որ կը խնամէ հոգեւորապէս քաղաք մը շրջակայ գիւղերով, որք բովանդակ կը կազմեն քաղաքական անուամբ գաւառ մը, իսկ եկեղեցական անուամբ թեմ մը կամ վիճակ մը: Այդ տեսուչները կամ հովիւները ամեն եկեղեցեաց մէջ եպիսկոպոս են, և եպիսկոպոսական ձեռնադրութիւն առնելով կը պաշտօնախարեն, և ստոյգ է պատմական ստուգութեամբ թէ նոյնն էր նաև մեր եկեղեցւոյ սովորութիւնը նախկին դարերուն մէջ: Վերջէն սովորութիւն եղած է որ վարդապետը եպիսկոպոսական ձեռնադրութիւն չառած ալ թեմի կամ վիճակի մը տեսութեան կամ հովուութեան պաշտօն վարեն, որով վիճակաւորաց համար եպիսկոպոսական ձեռնադրութիւն ունենալը պատահական մի պարագայ դարձած է, և եպիսկոպոսական ձեռնադրութենէ անկախաբար վիճակաւոր հովուութեան կամ տեսութեան պաշտօնը արտայայտելու համար առաջնորդ բառը սկսուած է գործածուիլ: Սակայն վեց եօթը դարէն յառաջ առաջնորդ բառը երբէք իրր եպիսկոպոսի նոյնանշան չէ եղած, մանաւանդ թէ եկեղեցական կիրառութեան մէջ առաջնորդ կոչուած են վանահայրը որք են առաջնորդք վանաց, Մեր կարծիքն է թէ միջին դարերու հալածանաց ժամանակ երբ եպիսկոպոսք քաղաքներէն վանքերը ապաւինելու պարտաւորեցան առաւել ապահովութեան համար, այսու առիթ ընծայեցին եպիսկոպոսական և վանահայրական պաշտամանց միացման, և առաջնորդ անունը եպիսկոպոս անուան տեղը բռնեց:

Մեքսիկայի անունը կը նշանակէ մայրաքաղաքացի և այդ անունը կը տրուէր այն եպիսկոպոսաց, որք կը նստէին մեծ գաւառներուն կամ նահանգներուն գլխաւոր քաղաքներուն մէջ, և որոց իշխանութեան ներքեւ կը գտնուէին ուրիշ քաղաքներ կամ գաւառներ և այդ քաղաքներուն կամ վիճակներուն եպիսկոպոսները: Այդպիսի մայրաքաղաքի եպիսկոպոսունը կոչուած են ևս արքեպիսկոպոս: Պէտքէ ընդունիմք թէ Հայաստանեայց եկեղեցին ալ այդպիսի մետրասօլիաներ կամ արքեպիսկոպոսներ ունեցած

է, զի պատմութեան մէջ կը հանդիպիմք ոչ միայն գաւառներու անուանով կոչուած եպիսկոպոսաց, այլ և նահանգներու անուամբ կոչուած եպիսկոպոսաց, և այդ նահանգներու եպիսկոպոսաց անունն չարգարանար, եթէ չընդունիմք թէ անոնք իշխանութիւն կը վարէին նոյն նահանգի մէջ գանձող գաւառներուն եպիսկոպոսաց վրայ:

Սակայն արքեպիսկոպոս անունը մանաւանդ Յունաց մէջ և նաեւ մեր մէջ մեծապօլիտէ վեր իմաստ ունէր և կը ցուցնէր այնպիսի մի եպիսկոպոս, որ ի շնորհս աշխարհագրական, քաղաքական կամ պետական բաժանմանց գերագահութիւն կամ գերազանցութիւն կամ յառաջնութիւն կը վայելէր քանի մի մեծապօլիտաց վրայ: Այդ տեսակ տրքեպիսկոպոսներ կը գանուէին թէ յարեւելս և թէ յարեւմուտս, Վրաց և Ալուանից եպիսկոպոսունք այդ տեսակէն են:

Արեւմտեան եկեղեցին այդ տեսակ տրքեպիսկոպոսները կը կոչէ *պրիմատ*, որ ի մեզ կը թարգմանի *Նախագահ*, և *Գաղղիա*, և *Անգղիա* և *Հունգարիա* և ըն. ցարդ իսկ ունին իրենց նախագահ տրքեպիսկոպոսները կամ պրիմասները, որք յառաջագոյն ընդարձակագոյն իրաւասութիւն ալ ունէին, թէպէտ այժմ պարզապէս անուանական դարձած են: Յունաց մէջ այդ տեսակ տրքեպիսկոպոսներ կը կոչուին *և սէփառքոս*, որ ի մեզ կը թարգմանի *Քնքերարարապետ*, և այդ անունը առին այն պատճառով որ երբ ի հնումն Հռովմէական կայսերութիւնը վեց մասերու կը բաժնուէր, իւրաքանչիւրին զըլիսաւոր կուսակալը կը կոչուէր վեցերորդապետ, և նոյն անունը ընդունեցան և գործածեցին ևս նոյնպիսի կեդրոններու մէջ նրստող եկեղեցական իշխանաւորք:

Հայրապետ անունը ըստ ինքեան ընդհանուր իմաստ ունի, և կը ցուցնէ զայն որ հայրերու մեծ է, և հայր անուամբ կ'իմացուին եպիսկոպոսք՝ որք ժողովրդեան հոգեւոր հայրերն են: Այդ անունը ճիշտ թարգմանութիւնն է յունական *պապիս* անուան, զոր նախ և առաջ սեփականեցին Անտիօքայ եպիսկոպոսները, և անկէ յետոյ առին Աղէքսանդրիոյ և Հռովմայ եպիսկոպոսները, զի և սորա հաւասարազօր իշխանութիւն ունէին, ի վերջոյ նոյն անունը առին ևս Երուսաղիմայ և Կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսները, սա կայսերութեան մայրաքաղաք դառնալուն և նա քրիստոսական անօրինութեանց տեղին և քրիստոնէութեան օրրանն

լինելուն պատճառաւ: Նոյն ժամանակ աւրիշ ինքնագլուխ մեծ աթոռք ալ, զոր օրինակ Հայոց և Պարսից և Եթովպացւոց աթոռք, նոյն անունը առին: Սակայն ասոնք սովորաբար կոչուեցան Կաֆուրի իբր ազգի մը Ընդհանրական եպիսկոպոս: Լամբրոնացին, « որոշումն ինն դասուց աստիճանաց եկեղեցւոյ » ճառին մէջ այդպէս կը դասակարգէ եկեղեցւոյ ինն կարգերը, 1. պատրիարք, 2. արքեպիսկոպոս, 3. մետրապօլիտ, 4. եպիսկոպոս, 5. քահանայ, 6. սարկաւազ, 7. կիսասարկաւազ, 8. ընթերցող, 9. երգեցող: Այդ ինն դասուց ճշդութեան վրայ պէտք չէ երկարեմք, զի չերեւիր թէ Լամբրոնացին կարի խիստ քննադատութեամբ նշանակած լինի զայնս, զի նոյն ճառին մէջ տարբեր բաժանում մըն ալ կը յիշատակէ, 1. արքեպիսկոպոս, 2. եպիսկոպոս, 3. քահանայ, 4. սարկաւազ, 5. կիսասարկաւազ, 6. ընթերցող, 7. կրօնաւոր, 8. ժողովուրդ, 9. երախայ, և այդ իննեակ դասերը կը նմանցնէ հրեշտակաց իննեակ դասակարգութեանց կամ երկնային իննեակ քահանայապետութեանց: Բայց զժուարին է երախայից և ժողովրդոց և կրօնաւորաց (այսինքն աշխարհիկ ճգնաւորաց) դասերը քահանայապետութեանց նմանցնել, որք ոչ քահանայապետութեան և ոչ քահանայութեան հետ կապ մը ունին: Միւս կողմանէ ստուգապէս գիտեմք թէ Լամբրոնացւոյ օրով և հաւանակաւորաբար այդ ճառին գրութենէն յետոյ մեր մէջ ընդունուեցաւ քահանայութեան եօթն աստիճանաց բաժանումը որք են 1. քահանայ, 2. սարկաւազ, 3. կիսասարկաւազ, 4. ջահնկալ, 5. երգմանեցուցիչ, 6. ընթերցող, 7. դռնապան, և Լամբրոնացին այդ եօթն աստիճանները չընդունիր, վասն զի չթուեր, այլ մանաւանդ կը պահէ այդ դրութենէ յառաջ Հայոց մէջ պահեալ աստիճանաց բաժանումը, որ միայն չորս աստիճան կընդունէր, 1. քահանայ, 2. սարկաւազ, 3. կիսասարկաւազ, 4. ընթերցող: Լամբրոնացին կը յիշէ ևս երգեցողը, պաշտօն մը որ օրհնութեամբ կստացուէր ոչ իբր աստիճան այլ իբր սկիզբն աստիճանաց, զոր Արեւմտեայք ալ ունին կղերիկոս անուամբ, սակայն կան ոմանք որ այդ ալ իբր աստիճան կը համարեն: Մեք բոլոր աստիճաններուն բաժանման և թուոյն վրայ խօսելու միտք չունիմք, այլ միայն կաթողիկոսութեան աստիճանին վրայ խօսիլ և ամոր գիւրքը ճշդել:

Ք.

ԿԱԹՈՒՂՒԿՈՍԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ.

Լամբրոնացիին Ներսէս վերոյիշեալ ճառին մէջ կաթուղիկոս ա-
նունը կը յիշէ երկրորդ աստիճանին այսինքն արքեպիսկոպոսին
վրայ խօսելով, ու կըսէ. « Ի սոյն աստիճան են կաթուղիկոսը որ
« թարգմանին ընդհանրականք, բայց ունին զառաւելութիւն պա-
« տուոյ քան զարքեպիսկոպոս, զայս՝ զի ոչ թէ յիւր վիճակն մի-
« այն, այլ ընդ ամենայն տեղիս ուր ազգքն իւր և համացեղքն
« են ունի իշխանութիւն ձեռնադրել նոցա եպիսկոպոս և տալ
« զմիւսոնն, վասն այնորիկ և անուանի կաթուղիկոս. » : Եւք
դիտելով որ Լամբրոնացիին կաթուղիկոսները երկրորդ աստիճանի
գնեւէն յետոյ երկրորդ աստիճանէն վեր պատիւ ունենալին կը
վկայէ, լատագոյն և ճշդագոյն կըսեպէմք ըսել թէ առաջին աս-
տիճանին կը պատկանին : Մանաւանդ որ արաքոյ վիճակի իշխա-
նութիւն ունենալն ալ կաթուղիկոսական աստիճանին յատուկ ի-
րաւասութիւն կամ յատկանիշ չէ, այլ պարզապէս հեռանք է
եկեղեցական սովորութեան փոփոխման : Երբ զի նախկին եկեղե-
ցոյ մէջ յորում ընդհանրական եկեղեցեաց միութիւնը անսա-
սան և հոգեւոր հաղորդակցութիւնը անխղիւ էր, եկեղեցական
իշխանութիւնը որ և իցէ աստիճանի մէջ ճշդիւ և խստիւ տեղա-
կան էր, և ով որ որ լինէր, և որ երկրէ որ լինէր, տեղւոյն եկե-
ղեցական իշխանութեան կհպատակէր, և եթէ բազմութիւ գաղ-
թականութիւնք իսկ լինէին՝ իրենց համար յատուկ եպիսկոպոս
չէին կրնար ունենալ : Յոյնք Խաւրիոյ մէջ լատին եպիսկոպոսաց,
և լատինք Ասիոյ և Ափրիկոյ մէջ յոյն եպիսկոպոսաց կը հնազան-
դէին, և այդ անյիշելի պատմական ստուգութիւն մի է : Պատ-
մութեանց մէջ ալ ունիմք որ Հայք Յունաստանի մէջ այն տառն-
ներ յոյն եպիսկոպոսաց կը հպատակէին : Նոյն աթոռոյ վրայ դա-
նազան ազգերէն յատուկ եպիսկոպոսներ գտնուելը յառաջ եկաւ
դանազան եկեղեցեաց իրարու հետ հիմնովին բաժնուելն, ոչ
միայն ծէսով այլ և դաւանութեամբ, և դիրար իբր օտարացեալ
և մոլորեալ դատելն, և այդ նոր սովորութիւնը իւր վերջնական
հաստատութիւնը և ընկալեալ օրինականութիւնը ստացաւ խա-
չակրաց ժամանակին, երբ լատինք սկսան արեւելից աթոռներուն
վրայ լատին եպիսկոպոսներ հաստատել յոյն և հայ եպիսկոպոս-

ներ լինելով հանդերձ: Յայնժամ հայերն ալ նոյն ոճոյն հետեւ
յան, և ուր որ բազմաթիւ հայ գաղթականներ կային, հայ եպիս-
կոպոսներ սկսան հաստատել: Այդ ժամանակէն պատմութեան
մէջ հեղաշեռէ կոկոսեմբ: Եւսնել Հայ և Հայոց յատուկ եպիսկո-
պոսներ յերուսաղէմ, յԱղէքսանդրիա, ի Կոստանդնուպօլիս, ի
Բեսաղոնիկէ, ի Անտալիա, և հեղաշեռէ ուրիշ շատ գաղթակա-
նութեանց մէջ: Կամբրոնային իւր ժամանակը կրդիաէ և ըստ
այնմ կրօնէնէ:

Կաթողիկոս բառին, ռաջին աստիճանի եկեղեցական իշխա-
նութեանց հաւասար լինելը կը հաստատեմք և ս անտիս որ սուկ
մեր գրոց մէջ Հռովմայ և Կոստանդնուպօլոս պատրիարքներն ալ
կաթողիկոս կը կոչուին, և հնար չէր տալ անոնց այդ անունը
եթէ կաթողիկոս անունը համազօր և համաստիճան չլլինէր
պատրիարք և հայրապետ անուններուն հետ:

Սակայն ինչպէս Լատինք երկու աստիճանի պատրիարքներ կը
բաժնեն, մեծ պատրիարքներ և փոքր պատրիարքներ, նոյնպէս և
մեք մեծ կաթողիկոսներ և փոքր կաթողիկոսներ կը նամք զատել:
Հարկ է գիտնալ թէ եկեղեցւոյ մէջ աստիճանք որչափ ալ պատուոյ
մաս մը ունենան, սակայն բուն իրենց էութիւնը եկեղեցւոյն և
ժողովրդեան պէտքերէն կախում ունի: Նպիտկոպոսական պաշ-
տամանց գատակարգութիւնը եկեղեցւոյ մէջ ստեղծուեցաւ այն
նպատակաւ որ մէկ աշխարհի կամ պետութեան մէջ գոնուող
հաւատացեալք իրենց գլխոց միջնորդութեամբ ի մի միաբանին և
իրարու հետ հաղորդութեան մէջ լինին, և մի հոգեւոր ժողովուրդ
կամ մի եկեղեցի կազմեն: Նպիտկոպոսաց մէջ ամենէն մեծն էր
և է պատրիարքն, որ ամբողջ ազգի մը կամ պետութեան մը կամ
աշխարհի մը ժողովրդեան գլուխն է, այդպէս է և կաթողիկոսն:
Նրկրորդն էր նախագահ արքեպիսկոպոսն, որ և սրբմաս կամ
երեսարքոս կը կոչուի: որ գլուխ է մի մասնաւոր կամ փոքր ժողո-
վուրդի որ ուրիշ մեծ ժողովուրդի յարակից կը նկատուի, երրորդն
է մետրապօլիտ արքեպիսկոպոսը, որ նահանգի մը այսինքն աէ-
բութեան կամ աշխարհի մը գլխաւոր բաժիններուն ժողովուրդը
կը հալուէ: Զորրորդն է միճակաւոր եպիսկոպոսը կամ թեմական
ստաճնորդը որ քաղաքի մը իւր գիւղերով, կամ ուրիշ բաւով,
գաւառի մը ժողովրդեան հովիւն է: Վիճակի մը ստորաբաժան-
մանց կամ մասանց հովիւներն ալ բորեպիսկոպոս կոչուած կը-

գտնուին իբր փոխանորդ եպիսկոպոսի կամ փախեպիսկոպոս: Հռոմեական եկեղեցւոյ հետևողք այդ հաւատացելոյ միութեան դրութենէն օգուտ քաղել ուզելով, կրպնդեն թէ բոլոր հաւատացելոյ ալ մի գլուխ պէտք է և այդ ալ Հռովմայ եպիսկոպոսը պէտք է լինի: Սակայն սոքա քրիստոնէութենէ օտար զգացմամբ կրմուռնան թէ ընդհանուր եկեղեցւոյ մի գլուխ և կենդանի Նիւին, որ յարուցեալ և կենդանի քահանայապետ կայ մնայ ի յաւիտեանս, է ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որ խոստացաւ լինել միշտ ընդ մեզ, և է երբ իւրքն յիւր անուն կրգումարին, իսկ այդ միութիւնը կը ճշմարտութի Տիեզերական ընդհանուր ժողովին մէջ, առ որ գիմեց միշտ նախնական եկեղեցին երբ պէտք ունեցաւ ընդհանուր եկեղեցւոյ կարծիքը կամ կամքը առնուլ:

Հռովմայ եպիսկոպոսին կայսերական մայրաքաղաքին մէջ լինեն, և արեւմտեան աշխարհաց մէջ միակ պատրիարք գտնուին, և այդ արեւմտեան կամ երազական աշխարհաց քաղաքական ազդեցիկ դիրք մը ունենան, առաջնորդեցին Հռովմայ պատրիարքաց աւելի ազդեցիկ դիրք մը ձեռք ձգելուն, մինչև որ Կոստանդնուպօլիս եղաւ թագաւորեալ քաղաք, և Կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսունք ձեռք ձգեցին այն ազդեցութիւնը, զոր թագաւորեալն Հռովմայ եպիսկոպոսը ունէին իրենցմէ յառաջ: Սակայն Նիկիոյ կանոնին մէջ Ազէքսանդրիոյ և Հռովմայ և Անտիոքայ եպիսկոպոսներն ի մի կարգի դրուած են բացայայտ կերպով, և ի զուր է նախկին եկեղեցւոյ սովորութեանց և օրինաց դէմ մաքառել նոր ժամանակաց բռնազրօտիկ մեկնութիւններով:

Նիկիոյ կանոնին համաձայն երեք գլխաւոր աթոռք կան ի մի կարգի, Ազէքսանդրիա և Հալիք և Անտիոք, և սոքա են որ յառաջ քան զամենեւին պատրիարքական անուն վայելեցին: Անոնցմէ ետքը եկան Երուսաղէմ և Կոստանդնուպօլիս, որք համահաւասար պատիւ և պաշտօն ընդունեցան ժողովական որոշմամբ, մինչ միւս երեքն նախնեաց սովորութեամբ ստացած էին զայն, որ է ըսել առաքելական հաստատութեամբ և աւանդութեամբ: Նոյն ժամանակներուն մէջ կային ևս Նիքեսոս և Կեսարիա և Հերակլիա, որ նուազագոյն պատուով զերագոյն իշխանութիւն կրլարէին, պահելով այն օրհամանները և բաժանումները, զորս կայսերական վերակացութեանց դրութիւնը կը ցուցնէր: Մինչ Հռովմայեցւոյ կայսերութիւնն այդ աթոռներուն վրայ բաժ-

Նուաժ էր: Կայսերութենէն դուրս երկիրն երէտ ալ ինքնագլուխ եկեղեցական գլուխներ ունէին առաքելական հաստատութեամբ, և այս տեսակ էին Հայոց և Պարսից և Եթովպացւոց աթոռներն: Ասոնք ալ դարձեալ իրենց յորակից՝ նախագահ արքեպիսկոպոստութեանց նման մեծ աթոռներ ունէին, զորս փոքր կաթուղիկոս հնար է անուանել, զորօրինակ Աղուանից և Վրաց աթոռք, որք իրենց ներքեւ մետրապօլիտական աթոռներ ունէին, սակայն Հայոց աթոռոյն գերագահութիւնը կրճանջնային:

Ընդհանուր քրիստոնեայ եկեղեցւոյ մէջ պատրիարք անունը կրտուի յիշեալ մեծ եպիսկոպոսաց, և զոր մեք կաթուղիկոս կը կոչենք մեզի սուրբական եղած բառով՝ յայնք և լատինք և ուրիշ սղգք միշտ և հանապազ և առանց բացառութեան պատրիարք կանուանեն, և այս այնչափ սուրբական է որ փաստերու և վկայութեանց զիմել չեմք պարտաւորիր:

Պատրիարք անունը վայելեցին Աղէքսանդրիոյ, Հռովմայ, Անտիոքայ, Երուսաղէմի, Կոստանդնուպօլսոյ, Հայոց, Պարսից (այժմ՝ Քողզէացւոց) և Եթովպացւոց գլխաւոր եպիսկոպոսներն: Ասոնցմէ դուրս նոյն անունը ունեցան ի նոտիմումն ռուսաց ընդարձակ պետութեան և ուղատ եկեղեցւոյ գլուխ եղող եպիսկոպոսունք որք կրնաւին ի Կիւի և յետոյ ի Մոսկուա, և այդ անուանակոչութիւնը գաղտնի չուր, երբ ռուք իրենց եկեղեցւոյ ընդհանուր գլխաւորութիւնը Արևհասի մը ձեռք յանձնեցին: Արեւմտեան եկեղեցւոյ մէջ պատրիարք անունը կը վայելէ այժմ՝ նաև Վենետիկոյ եպիսկոպոսն իբր հետեանք Ակուիլէայի հերձուածոյն, յորում՝ Ակուիլէայի եպիսկոպոսը զիրենք պատրիարք կոչեցին Հռովմայ պատրիարքին դէմ, չերձուածք վերջացաւ այլ հեաքը մնաց Ակուիլէայի եպիսկոպոսին կոչման մէջ, զոր ապա Վենետիկոյ հանրապետութեան զօրաւոր ժամանակը Վենետիկոյ եպիսկոպոսներն իրենց սեփականեցին:

Պարտագալիոյ մայրաքաղաքի՝ Վիսփոնայի եպիսկոպոսն և Ապանիոյ լանակին գլխաւոր երէցն ալ Հռովմայ պապերուն կամայական շնորհամբ պատրիարք կոչուեցան, առաջինն իւր երկրին վրայ և երկրորդն արեւմտեան Հնդկաց վրայ, և այս անուամբ կիմացուէր Ամերիկան: Սակայն Վենետիկոյ և Վիսփոնայի անուանեալ պատրիարքներն պարզ մետրապօլիտէ մը աւելի չեն, իսկ արեւմտեան Հնդկաց պատրիարքն այնչափ ալ չէ:

Այդ ծանօթութիւնները աստ կը դադարեցնեմք, զի իւրաքանչիւր եկեղեցւոյ նուիրապետութիւնն քննել և շարադասել չէ միտաւորիս, այլ միայն Հայոց տօթոռոյն վրայ խօսիլ և անոր դիրքն, իշխանութիւնն, և նուիրապետական աստիճանն որոշել ի բաղդատութիւն նուիրապետութեան այլոց եկեղեցեաց:

(Երբեք և)

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԵՆՐԻՍԵԿԵՆ ՏԵՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՂԲԱՏԱՅ

ԱՇԽԱՐՀԱՀՈՉԱԿ ՎԱՆԻՑ

ՍՐԲՈՑ ՆՇԱՆԻ.

«Հնախօտութիւնն լուսաբանումէ ազգի անցեալ պատմութիւնն, որ համարմէ մեզ մատենագրութեամբ, մնացեալ յիշեցուցանող զեռ անջինջ արժանագրութեամբ եւ մերժակայ ժողովրդական աւանդութեամբ: . . .
Նորա մեծ ծառայութիւն արած կլինէին ազգին եւ գրականութեան, եթէ հոգային մեր մնացեալ յիշատակարաններն ամբողջութեամբ պահպանել, եւ ջանային հնութեանց նկարագիրներն եւ արժանագրութիւններն ընծայել ազգի բանասէրներին ազգի անցեալ պատմութիւնն մշակելոյ համար: » Մեղ. Հայաստանի 1875 № 37:

ՅՕԴՈՒԱՄ Ա.

ՏԵՂԵԳՐՈՒԹԻՒՆ.

Հաղբար *).

Հաղբարտ գիւղ պատուական ըստ գրից և ըստ տպահատութեան գրանի առ Դէբէգայ գետով ի նահանգին Տփլիսայ ի գաւառակին Բօրչալուի ի հնումն Գուգարք նահանգի յաշխարհին Սեւաոր-

(*) Բարդ բառս ելեալ ի հաղբ անուանէ և ի վրէժ բայէ նշանակէ ատօղ զնորոգից ի կամ զթակարգ աշխարհի ճգնաղցեաց կրօնաւորքն մե-